# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ըղեմնից հիւսիսային Խորհրդակցու-թեան ԱՆԾ. Հիւպատոս Գ. Պետեր-ման հայերէնագէտ և հռչակաւոր Դոք-տորը զլացնելով իւր պաշտօնական ժամանակակիցներու ուղևորեցաւ ՚ի Բեր-լին իւր բնակելին համալսարանական ուսու-ցչութեան պաշտօնը վարելու ։ Գ. Պե-տերման խիստ քաղցր յիշատակ թո-ղուց Երուսաղէմի մէջ իւր ազնիւ ու-մարդասէր բնաւորութեամբ և մա-նաւանդ իւր գրական և քաղաքա-կան յարատեւ աշխատութեամբ ։ Գ. Պետերման անմոռանալի է յաւէտ Ս. Աթոռոյս բոլոր միաբանական Ուխտի համար, վասն զի իւր յօժարական աջ-ակցութեամբ ոչ միայն պատուեց մեր դպրոցական հանդէսները, այլ և եկե-ղեցական նշանաւոր տօները ․ որոց գոհութեամբ ներկայ գտնուեցաւ ։ Գ. Պետերման հիւպատոսական պաշ-տօնին հետ՝ զբաղեցաւ Պաղեստինի մէջ լեզուագիտական և հնագիտական խուզարկութեամբ, որուն արգասիք-ները հարկաւ տպագրութեամբ լոյս պիտի տեսնեն և եւրոպական գիտնոց մատուցութիւնը գրաւեն ։ Նոր ժա-մանակներս կ՚սպասուի նոր հիւպա-տոսի գալուստը ։

— Աղեքսանդրիոյ անգղիական Հիւ-պատոսը կը հեռագրէ քաղաքիս անգղի-ական Հիւպատոսին թէ՝ Պէր. Սա-հակ եպիսկոպոսը և Տիմոթէոս վար-դապետը՝ Եգիպտոսէն զինուած պաշ-տամատրաց ձեռքով արդէն Հայեր-ուսանի Պելեսայ գաւառի արգելական վայրէն ելնելով՝ ուղևորած են Սու-րավայի վրայէն Երուսաղէմ դառնա-լու ։ Բաղձալի ենք որ այս ուրախա-կան լուրը ինչպէս Ս. Աթոռոյս միա-բանից, նմանապէս և բոլոր ազգայնոց սրտերէն պիտի փարատէ այն տրտմու-թեան և վհատութեան քողը, որ պա-տած էր Հայերուսանի ուղևորաց երկարատեւ անյայտութեան պատ-ճառաւ ։

— Հոգեհանգստեանէն ՚ի ցաւ սրտի կը հաղորդուի մեզ. — Աբգարեանց ՍՆԾ. Գրիգոր Աղայի դուստրն՝ Տիկին Ան-նան, համեստափայլ ամուսին Գ. Աղա-խանոյ Ալխասեան՝ Մայիս ամսոյ վեր-ջը երկարատեւ հասակի մէջ կնք-եց իւր մահկանացուն խոր տրտմու-թեան մէջ թողլով իւր ամուսինը, որ-դիքը եւ ազգականք Աբգարեանց և Ալխասեանց մեծահամբաւ Գեր-դաստանները ։ Հանգուցեալ Տիկինը նշանաւոր էր իւր կենդանութեան ժամանակ քրիստոնէական առաքինու-թեամբ, ամուսնական ու մայրա-կան պարտականութեամբ և աղքա-տին ու բարեպաշտ վարուք ։

— Տէրութեան հրամանաւ Բեթ-հեղէմի այրի դրան ձախակողմ վրայ կախուեցան մեր երկու եւ Յունաց մէկ պատկերները ․ իսկ մեր միւս մի-նացած պատկերները պիտի կախուին միջնավարագուրի նորոգութենէն յե-տոյ. զոր ինչպէս կ՚ըսեն, կառավա-րութիւնն ինքն պիտի նորոգէ, այ-գայ մէջ խռովութեան առիթ չթողլու գեղեցիկ դիտաւորութեամբ ։

digitised by A.R.A.R.@